

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/1

14 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ 12.09.2014 թ-ի գանգատող ՀՀ ՖՆ ՕՀՎ 14.07.2014 թ-ի թիվ 5010085 ստուգման ակտի դեմ:

«Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ գանգատում բերված փաստարկերի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարի 16.06.2014 թ-ի թիվ 5010085 հանձնարարագրով «Մեյքոնյան վարժարան» ՍՊԸ-ում 23.06.2014 թ-ից մինչև 07.07.2014 թ-ը կատարած ստուգումների վերաբերյալ կազմված 14.07.2014 թ-ի թիվ 5010085 ակտում նշված խախտումների վերաբերյալ:

Ակտի 4-րդ կետում /Ավելացված արժեքի հարկ/ նշված է, որ համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ-ն 2011-2012 թ.թ. պետք է համարվեր ԱԱՀ վճարող, քանի որ Մարգարիտ Մեյքոնյանը միաժամանակ հանդիսանում է «Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ-ի 50% բաժնետեր և «Վ-0» ՍՊԸ-ի 35% բաժնետեր:

Նշվածի վերաբերյալ հայտնվում է, որ «Վ-0» ՍՊԸ-ի կողմից հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չի ներկայացվել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն «Վ-0» ՍՊԸ-ն չունի գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ: Այսինքն, «Վ-0» ՍՊԸ-ն գրանցման պահից որևէ գործունեություն չի իրականացրել, եկամուտ չի ստացել, պետությանը վնաս չի պատճառել, ուստի այն փաստացի չգործող, գոյություն չունեցող, լուծարված կազմակերպություն է: Հետևաբար, Մարգարիտ Մեյքոնյանի տվյալ կազմակերպությունում բաժնետեր լինելու փաստը չէր կարող հիմն հանդիսանալ «Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ-ի ԱԱՀ վճարող հանդիսանալու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 16.06.2014 թ-ի թիվ 5010085 հանձնարարագրի համաձայն «Մեյքոնյան Վարժարան» ՍՊԸ-ում որակազրկվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 14.07.2014 թ-ի թիվ 5010085 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3.001.966 դրամ:

Ստուգման ակտի 4-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ համաձայն ՀՀ ՖՆ ԻՀ և ՎՎԻ վարչության հետաքննության բաժնի հետաքննիչ Դ.Գևորգյանի «Ստուգում նշանակելու մասին» 30.05.2014 թ-ի որոշման և ըստ ընկերության կողմից ներկայացված սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ստուգմամբ պարզվել է, որ

ընկերությունը գրառվում է հոգևրանական ծառայությունների մատուցման և համարվել է ԱԱՀ վճարող չհանդիսացող: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և և նթակետի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «Սելբոնյան Վարժարան» ՍՊԸ-ն 2011-2012 թթ-ին պետք է համարվեր ԱԱՀ վճարող, քանի որ Մարգարիտ Սելբոնյանը միաժամանակ հանդիսանում է «Սելբոնյան Վարժարան» ՍՊԸ-ի 50% բաժնետեր և «Վ-0» ՍՊԸ-ի 35% բաժնետեր, սակայն 2011-2012 թթ-ի համար ՀՏ և ներկայացրել միայն շահութահարկի պարզեցված հաշիւ րկներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթները ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3.002.966 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի համաձայն, «Սույն հոդվածով սույն մասով ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում»:

Ե) այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը չի կարող տարածվել»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարգարիտ Սելբոնյանը միաժամանակ հանդիսանում է «Սելբոնյան Վարժարան» ՍՊԸ-ի 50% բաժնետեր և «Վ-0» ՍՊԸ-ի 35% բաժնետեր, ընդ որում, վերջինս սահմանված կարգով լուծարվել է 2012 թ-ի օգոստոս ամսին, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի դրույթներով «Սելբոնյան Վարժարան» ՍՊԸ-ն 2011-2012 թթ-ին համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը:

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ, ՕՀՎ 14.07.2014 թ-ի թիվ 5010085 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգառը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի որոշումը սույն մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում բողոքարկել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Ս. ԳԻՒՄՅԱՆ